

# ԱՐՑԱԽԵԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

## ԵՒ ՓՈՒԶԻՉՈՒՄՆԵՐԻ ԱՐՈՒԵՍԱՆ

### ՄԱՍԻԿՈՆ ԱՍԱՏՐԵԱՆ

Ընթացիկ տարուայ գարնանային ամենածանր օրերին Գորբաշովն ու Մութալիբովը ձեռք ձեռքի լուծած խորհրդային բանակի եւ Ադրբեջանի ՕՍՕՆականների միացեալ ուժերով անձնագրային ռեժիմի ստուգման պատրուակով, կոտորում էին Արցախի ու նրա մերձաւոր հայաբնակ շրջանների բնակչութեանը, հայաթափ անում մեր պապենական հողերը:

Մեր կառավարութիւնը, հրաժարուելով «Պայքար, պայքար մինչեւ վերջ» եւ «Միացում» իր հանգուցային կարգախօսներից, տենդագին ջանքեր էր թափում մի կերպ վերականգնել ստատուս քոտն կամ գոնէ փրկել մնացածը: Բայց դա նրան չյաջողուեց: Հարց է ծագում. ի՞նչն էր անյաջողութեան պատճառը՝ փոխզիջման պայմաններն էին հակառակորդ կողմի համար անընդունելի, թէ՛ ժամանակն էր անյաջող ընտրուած: Այս հարցերի բանիմաց, ճիշտ պատասխանը ստանալու համար պէտք է տիրապետել մի շարք գիտութիւնների՝ միջազգային յարաբերութիւնների ու առանձին երկրների (առաջին հերթին խոշոր տերութիւնների) արտաքին քաղաքականութեան հիմունքներին ու պատմութեանը, յատկապէս՝ դիւանագիտութեան հիմունքներին ու պատմութեանը, քաղաքագիտութեանը եւ այլն, որոնք ներկայումս լայնօրէն օգտագործում են խաղերի տեսութիւնը, այդ թում խաղերի կիբեռնետիկական տեսութիւնը, բախումների տեսութիւնը եւ այլն:

Քաղաքագիտութիւնն ու դիւանագիտութիւնն իրենց ողջ պատմութեամբ ու տեսութեամբ նախ մեզ ասում են, թէ որքան էլ վեհ ու արդար, սուրբ ու անձեռնմխելի լինեն մի որեւէ պետութեան կամ ժողովրդի պայքարի նպատակները, որքան խոր ու արմատական, նըրանց գոյութեան հիմքերը շօշափող լինեն պայքարի առարկայ հանդիսացող հարցերը, քաղաքականութեան մէջ միշտ էլ տեղ կայ փոխզիջումների համար: Դա բացատրում է այն բանով, որ ժողովուրդը, նրա գոյութիւնը պայքարի գերագոյն նպատակն ու արժէքն է: Ոչ մի զիջում չի կարող լինել այն բոլոր հարցերում, որոնք անմիջականօրէն սպառնում են ժողովրդի գոյութեանը: Տուեալ դէպքում զիջումը, փոխզիջումը եւ այլն, յիրաւի դառնում են անիմաստ, որովհետեւ թշնամին առանց այդ էլ ոչնչացնում է ժողովրդին: Միւս բոլոր դէպքերում, կախուած պայմաններից, այս կամ այն տիպի զիջումներն ու փոխզիջումները այս կամ այն չափով արդարացուած են: Եթէ վիճակն անբարենպաստ կամ առաւել էւ անելանելի է, ապա լաւ է զիջես թշնամուն քո շահերի մի մասը, սակայն նրանից փոխզիջում կորզելով պահպանես զխաւորը, ըստ պատելով ապագայում բարենդպաստ իրադրութեան: Քաղաքա-

կանութիւնը, իրօք, հնարաւորի պրուեստն է: Բայց, ի գիտութիւն Բիսմարկի, այս միտքը մամուլում հրապարակուած Գորբաշովի ճանից սերտած ամեն մի քաղաքական իրադրութեան՝ մէջ իսկնապէս հնարաւորը իրադարձութիւնների մակերեսին ընկած չէ, որպէսզի անմիջապէս տեսնես եւ օգտուես: Այդ հնարաւորը, որպէս կանոն, գտնում է իրենց բուն էութեամբ չափազանց բարդ իրադարձութիւնների ամենախոր շերտերում եւ, բացի այդ, իրադարձութիւնների փոփոխականութեանը զուգընթաց ինքն էլ խիստ փոփոխական է: Այն, ինչ այսօր հնարաւոր է, անգամ շատ հնարաւոր, վաղը իրադարձութիւնների կամ ընդհանուր իրադրութեան կտրուկ փոփոխութեան հետեւանքով դառնում է անհնարին, անգամ լիովին անհնարին եւ հակառակը: Օգոստոսեան դաւադրութեան ձախողման հետեւանքով մինչ այդ ստեղծուած իրադրութեան շեշտակի փոփոխութիւնը դրա ցայտուն վկայութիւնն է:

Իրադրութեան առարկայական պայմանների տեսանկիւնից փոխզիջման անհրաժեշտութիւնը ծագում է պայքարող կողմերի ուժերի միջեւ առաջացած հաւասարակշռութեան պատճառով գոյացած փակուղու դէպքում, երբ կռուող կողմերից եւ ոչ մէկը յաղթանակ

տանել չի կարող, կամ կողմերի ուժերի տարբերութիւնը շատ փոքր է, եւ կողմերից մէկի յաղթանակը միւսի վրայ կարող է չափազանց թանկ նստել հէնց յաղթողի վրայ, այսինքն՝ դառնալ պիռոստեան յաղթանակ, կամ էլ երբ իրադրութիւնը վերջին աստիճանի բարդ ու խճողուած է, կտրուկ փոփոխական եւ յղի կողմերից իւրաքանչիւրի համար անկանխատեսելի, սակայն ինտուիտիօրէն կռահուող ծանր աղետալի հետեւանքներով: Նմանօրինակ ահեղ անորոշութեան պայմաններում կողմերի պայքարը ղեկավարող բանիմաց, փորձառու քաղաքագետները գերադասում են փոխզիջման հասնել: Իմ կարծիքով, այս երեքը հիմնական դէպքերն են, կարող են լինել նաեւ բազմաթիւ ոչ հիմնական, միջանկեալ եւ խառը բնոյթի տարբերակներ, որոնք փոխզիջման բազմապիսի լուրջ շարժառիթներ են ծնում:

Էլ անելի բազմապիսի ու բազմաքանակ են կոնկրետ բախումնային իրադրութեան մէջ փոխզիջման անհրաժեշտութիւնը կամ ցանկալիութիւնը թելադրող ենթակայական դրդապատճառները, կապուած կողմերի կազմակերպածութեան մակարդակի, պայքարելու եռանդի եւ անձնագրութեան, փորձառութեան, բանիմացութեան, տաղանդի, քաղաքական ու ռազմական հմտութիւններ կիրառելու, մասնաւորապէս, հակառակորդին ապակողմնորոշելու եւ խաբելու կարողութիւնների եւ նմանօրինակ շատ



# ԱՐՑԱԽԵԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ...

Սկիզբը էջ 7

բաների հետ, որոնք կողմերի համար մեծացնում են իրադրության, ուստի եւ պայքարի ընթացքն ու ելքի անորոշութիւնը, դրանով իսկ խթան հանդիսանալով փոխզիջմանը ձգտելու համար:

Սակայն փոխզիջման արեւստը յաջողութեամբ կիրառելու համար պայքարի մէջ մտնող կողմը պէտք է հնարատրին շափով հանգամանալից, ստոյգ վերլուծութեան միջոցով յստակօրէն պարզի կողմերի ուժերի յարաբերակցութիւնը, նրանց առկայ եւ հնարատր դաշնակիցների ուժերի մեծութիւնն ու տեղաբաշխումը, ընդամին յատուկ ուշադրութիւն դարձնելով ոչ այնքան դրանց ստատիկային, որքան դինամիկային եւ վերջինիս միտումներին, ուստի ընդհանուր իրադրութեան (ներառեալ գլոբալ) փոփոխման միտումներին: Այնուհետեւ դրա հիման վրայ ճշգրտի ու յստակօրէն ձեւակերպի իր նպատակները, աստիճանատրի դրանք, ճշգրիտ տարրերի առաւելագոյններն ու նուազագոյնները, դրանց ցանկալիութիւնը կամ անցանկալիութիւնը, ռեալութիւնը ընդհանուր եւ տեղային իրադրութեան այս կամ փոփոխութեան, անգամ կտրուկ շրջադարձի դէպքում:

Պայքարը դիտելով որպէս խաչի, մասնատրապէս կիբեռնետիկական խաչի մի բարդ եւ սուր տարրերակ ինֆորմացիոն համակարգերի միջեւ եւ օգտագործելով խաչերի համապատասխան տեսութիւնները, հաշուարկուած են սեփական եւ հակառակորդի հնարատր քայլերը, դրանց տարրերակներն ու պայքարի այս կամ այն ելքը, նկատի ունենալով նաեւ, որ առաւելագոյն եւ նուազագոյն նպատակները ոչ թէ կէտային, այլ գծային բնոյթ ունեն, պարունակելով իրենց առաւելագոյնն ու նուազագոյնը (մաքսի-մինիմալը եւ մինի-մաքսիմալը): Այնուհետեւ հմուտ քաղաքագետը պարզում է, թէ ստեղծուած իրադրութեան մէջ դրանցից ո՞րն է ամենահաւանականն ու իրատեսականը եւ դրա հիման վրայ մշակում է պայքարի ռազմավարութիւնն ու մարտավարութիւնը: Եթէ վերլուծութիւնից հետեւում է, որ ստեղծուած իրադրութեան պայմաններում առաւելագոյնը (մաքսիմում մաքսիմորումը) անհնարին, կամ քիչ հաւանական է, բանիմաց իրատես քաղաքագետը փնտրում է տուեալ այն մաքսի-մինիմալը կամ մինի-մաքսիմալը, որոնք տուեալ իրավիճակում օպտիմալն են: Նպատակների ճիշտ ընտրութիւն կատարելուց յետոյ խիստ կարեւորում է փոխզիջման քաղաքականութեան անցնելու պահը: Պէտք է ինքնին հասկանալի լինի, որ հակառակորդին փոխզիջում առաջարկելու ամենայարմար պահը սեփական պայքարի վերելքի գագաթնակէտն է ու հակառակորդի ուժերի ջլատման, շփոթութեան, ապակողմորոշման շրջանն է, երբ նրան թում է, թէ հակառակ կողմը ի գորու է յաղթելու իրեն, կամ ձեռք բերելու անելի շատ բան, քան իր կողմից առաջարկ-

ող փոխզիջման պայմաններով: Հակառակ իրողութեան դէպքում փոխզիջման առաջարկներն ապարդիւն ու վնասակար, անգամ կործանարար են, քանզի նման առաջարկները - հաստատում են, որ հակառակորդը սկսել է զիտակցել իր պարտութեան անխուսափելիութիւնը: Դա, անշուշտ, նոր բարոյական ուժ ու եռանդ է հաղորդում զգալի նիւթական ռեալութեամբ օժտուած կողմին եւ արագացնում նրա լիակատար յաղթանակը հակառակորդի նկատմամբ:

Վերոյիշեալ գիտութիւնների եւ տեսութիւնների այս դրոյթների հետ համեմատելով արցախեան շարժման ընթացքն իր ռազմավարութեամբ ու մարտավարութեամբ հանդերձ, պէտք է ասել ճշմարտութիւնը. իր ամբողջութեան մէջ այն որպէս կանոն հակասել է այժմ էլ հակասում է ներանց:

Նախ արցախեան շարժման հէնց սկզբից սխալ էր պարզուած ընդհանուր քաղաքական ուժերի տեղաբաշխումը եւ յարաբերակցութիւնը, որի պատճառով էլ շարժման ընթացքում առաջացան բազմաթիւ ծանր յուսախաբութիւններ եւ ասուեցին շատ անէձքներ - դաւաճաններ-ի հասցէին: Ակադեմիկոս Աղանբեգեանի (այն ժամանակ Գորբաշուվի՝ տնտեսական հարցերի գծով օգնականի) բոլորին յայտնի, մեզ ոգետրած յայտարարութեան, ինչպէս նաեւ Գորբաշուվի հայ մերձաւորներից Շահնազարովի եւ Սիտարեանի ազդեցութեան տակ մեր ժողովրդի մի մասը եւ նրա շարժման ղեկավարութիւնն իրենց վրայ վերցրած մարդիկ եզրակացրին, որ Գորբաշուվը մտադիր է Արցախը միացնել Հայաստանին: Սակայն հետագայում պարզուեց, որ նա մեզ ոչ թէ դաշնակից, այլ հակառակորդ է: Իսկ մինչ այդ պարզելը, նա երկու անգամ եւս խաբեց մեզ, որոշ ժամանակ ձեւանալով չեզոք հաշտեցնող, ապա Ադրբեջանի պասիւ դաշնակից:

Չնայած Արեւմուտքի պարզից էլ պարզ յայտարարութիւններին, գլոբալ ուժերի դիրքորոշումը, հետեւաբար, գլոբալ իրադրութիւնը արմատապէս սխալ ըմբռնուեց, էլ անելի սխալ ըմբռնուեց նրա փոփոխութեան միտումը: Մեր լիդերները լրջօրէն համոզուած էին, որ Արեւմուտքը, հաւատարիմ մնալով ազատութեան, ժողովրդավարութեան, մարդու իրատունքների, ազգերի ինքնորոշման իրատունքի եւ իր կողմից հռչակուած այլ վեհ սկզբունքներին ու գաղափարներին, պէտք է սատար կանգնի արցախեան շարժմանը: Բայց խաբուեցին: Արեւմուտքը ըսկըզբում գրաւեց թոյլ ու պասիւ օժանդակութեան դիրք, իսկ հետագայում ըստ էութեան յետքաշուեց: Դա էլ հէնց հիմք հանդիսացաւ նրան դաւաճանութեան մէջ մեղադրելու համար: Մինչդեռ այստեղ ոչ մի դաւաճանութիւն չկայ: Գորբաշուվեան - պերեստրոյկա-յի հէնց սկզբից Արեւմուտքն անընդհատ յայտարարել է, որ սարսափում է խորհրդային

ամբողջատիրութեան տարերային սրընթաց փլուզումից, որը կարող է սպառնալ համայն մարդկութեան գոյութեանը: Գորբաշուվը ինքն էլ բազմիցս յայտարարել է. -Եթէ մենք կործանուենք, ապա բոլորիդ մեզ հետ կը տանենք: Եւ Արեւմուտքը զլխով հաւանութեան նշան է անում Գորբաշուվին: Պատմութեան մէջ, յիրաւի, աննախադէպ իրադրութիւն է ստեղծուել. միջուկային ժանիքներով օժտուած ամբողջատերը սպառնում է ամբողջ աշխարհին: Ցաւօք, մեր լիդերներից ոչ ոք չընկատեց, որ որքան ազգամիջեան բախումները մեր երկրում տարածեցին ու թեժացան, այնքան Արեւմուտքի պահպանողականութիւնն ուժեղացաւ, որ նոյնիսկ Հարասլաւիայում ծաւալուող ազգամիջեան կռիւները բացասաբար են ազդում արցախեան շարժման նկատմամբ նրա կողմնորոշման վրայ: Եւ արեւմտեան տերութիւնները սկսեցին էլ անելի շեշտել, որ իրենք քաղաքական կայունութեան բոլոր պրոբլեմները (այդ թում առաջին հերթին բոլշեւիկեան ամբողջատիրութեան լուծարման հարցերը) աստիճանական, բացառապէս խաղաղ միջոցներով լուծելու կողմնակիցներ են: Ամեն մի փոքր ինչ բանիմաց քաղաքագետի համար պարզ է. մենք լիւնելով փոքրաթիւ, թշնամիներով շրջապատուած ազգ, շատ անելի լաւ պէտք է հասկանանք ոչ միայն ռեգիոնալ, այլեւ աշխարհում տիրող ընդհանուր իրադրութիւնը եւ յարմարուենք նրան: Այդ իրադրութեանը հակառակ գնալու, նրան մեր պահանջները թելադրելու բոլոր արուած փորձերը ազգի համար կործանարար են:

Միջազգային իրադրութեան մեզ համար վատացման առաջին իսկ նշաններից բանիմաց լիդերներն անյապաղ պէտք է համապատասխան եզրակացութիւններ անելին փոխզիջման քաղաքականութեանը դիմելու ուղղութեամբ: Սակայն ոչ այդ իրադրութեան վատացումը նկատուեց, ոչ էլ անհրաժեշտ եզրակացութիւններ արեցին:

Պայքարի հնարատր նպատակների պատշաճ վերլուծութիւն, յստակ աստիճանատրում եւ ձեւակերպում չկատարուեց: Չըպարզուեց, թէ առաւելագոյն ու նըրազագոյն նպատակներից բացի յատկապէս որոնք են մաքսի-մինիմալ եւ մինի-մաքսիմալ նպատակները: Լիդերները հիմք էին ընդունել միմիայն մաքսիմալը, ըստ էութեան, անտեսելով միւսները: Նոյն դիրքն էր գրաւել նաեւ ադրբեջանական կողմը, որի միակ հետապնդած մաքսիմալ նպատակը ստատուա քուոյի պահպանումն էր: Պայքարող կողմերի անզիջում դիրքորոշումը կենտրոնին հնարատրութիւն ընձեռեց ամբողջ աշխարհի առջեւ հանդէս գալու հաշտարար դատաւորի խիստ շահեկան դերում, աստիճանատրել կողմերի նպատակները, յարաբերակցել դրանք իր սեփական նպատակների հետ եւ ապա թելադրել իր համար ձեռնտու փոխզիջման այս կամ այն տարրերակի ձեւով: